

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ավանդի գրավով վարկ

Հրապարակվել է՝ 30.05.2024թ.

1	Վարկի հիմնական չափանիշներ	
1.1	Նպատակային նշանակություն	Վարկը տրամադրվում է սպառողական նպատակներով
1.2	Նպատակային խումբ	Ֆիզիկական անձ - ավանդատուներ
1.3	Վարկի ձևակերպման վայր	Բանկի ցանկացած մասնաճյուղ
1.4	Վարկի մարման եղանակ	1. Անուիտետային (ամսական հավասարաչափ) մարումներ 2. Հիմնական պարտքը վճարվում է վարկի ժամկետի ավարտին, տոկոսները վճարվում են ամեն ամիս
1.5	Ավանդի արժույթ	AMD
1.6	Վարկի արժույթ ¹	Վարկը տրամադրվում է ավանդի նույն արժույթով՝ AMD
1.7	Ավանդի տոկոսադրույքին գումարվող վարկի տոկոսադրույք	4.5%
1.8	Տարեկան փաստացի տոկոսադրույք ²	9%-15.5%
1.9	Տոկոսագումարի հաշվարկման և վճարման կարգը	Մինչև ավանդի 95%: Ավանդի տոկոսները ժամկետի սկզբում ստանալու դեպքում վարկի առավելագույն գումարի չափը կազմում է ավանդի գումարի մինչև 90%:
1.10	LTV (Վարկ/Գրավ) առավելագույն հարաբերակցություն	95%
1.11	Վարկի նվազագույն գումար	Սահմանված չէ
1.12	Վարկի առավելագույն ժամկետ	Ավանդի ժամկետով, բայց 5 տարուց ոչ ավել: Եթե մեկ վարկի համար գրավ հանդիսացող ավանդի գումարը բավականացնում է երկրորդ (կամ ավել) վարկի տրամադրման համար, ապա երկրորդ և հաջորդ վարկի վերջնաժամկետի օրը պետք է համընկնի առաջին վարկի վերջնաժամկետի հետ:
1.13	Վարկի նվազագույն ժամկետ	Սահմանված չէ
1.14	Վարկի տրամադրման եղանակ	ՀՀ դրամով վարկի տրամադրման դեպքում՝ անկախիկ միջոցով փոխանցում հաճախորդի բանկային հաշվին (Բանկի կողմից բացվող բանկային հաշվի պայմաններին կարող եք ծանոթանալ Բանկի ինտերնետային կայքում https://www.vtb.am/am/accounts-and-payments հասցեով): Արտարժույթով (USD, EUR, RUR) վարկի տրամադրման դեպքում՝ անկախիկ միջոցով փոխանցում հաճախորդի գործող քարտային հաշվին ² (Բանկի կողմից տրամադրվող քարտերի պայմաններին կարող եք ծանոթանալ Բանկի ինտերնետային կայքում https://www.vtb.am/am/payment-cards հասցեով):
1.15	Վարկի վաղաժամկետ մարման արգելք	Վաղաժամկետ մարման մասով սահմանափակումներ չկան: Վարկառու/ները իրավունք ունի/են՝ - առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծել վարկային պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում (մտածելու ժամանակ): Այդ դեպքում Վարկառու/ները պարտավոր է/են վարկի փաստացի օգտագործված օրերի համար վճարել վարկային պայմանագրով նշված փաստացի տոկոսադրույքով հաշվարկված տոկոսագումարները: - վարկային պայմանագրով նախատեսված ժամկետներից շուտ մարել վարկը: Տվյալ դեպքում Վարկառու/ների նկատմամբ տուժանք չի կիրառվում, ընդ որում՝ • Ենթակա են նվազեցման վարկի մնացորդի նկատմամբ հաշվարկվող տոկոսների, միջնորդավճարների և սպասարկման վճարների ծախսը, • Ենթակա չեն նվազեցման սույն պայմանագրի պայմանների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար վճարված տուժանքները, վարկի մարման և/կամ տոկոսների վճարման նպատակով կատարված փոխանցումների համար, ինչպես նաև այդ նպատակով բացված հաշիվների սպասարկման համար վճարված գումարները, նոտարական վավերացման, պետական գրանցման (նշված ծառայությունների առկայության դեպքում) դիմաց կատարված վճարները, հավելյալ՝ սույն վարկի հետ կապ չունեցող, վարկառուի ցանկությամբ ընտրված ապահովագրական ծառայությունների դիմաց կատարված ապահովագրավճարները: Վարկի ամբողջական վաղաժամկետ մարման դեպքում ենթակա են վերադարձման նախապես վճարված, սակայն փաստացի չօգտագործված ամիսների/օրերի համար կատարված վճարները:
1.16	Վարկի հաստատման ժամկետ	Մինչև 10 րոպե
1.17	Վարկառուին վարկի տրամադրման ժամկետ	Մինչև 30 րոպե
1.18	Ապահովություն	Ավանդ ⁴

2	Բանկի միջնորդավճարներ	
2.1	Հայտի դիտարկման միանվագ միջնորդավճար	Նախատեսված չէ
2.2	Վարկի տրամադրման միանվագ միջնորդավճար	Նախատեսված չէ
2.3	Վարկային հաշվի սպասարկման ամսական միջնորդավճար	Նախատեսված չէ
3	Վարկառուին ներկայացվող պահանջներ	
3.1	Վարկային պատմությանը ներկայացվող պահանջներ	Նախատեսված չեն
4	Լրացուցիչ պայմաններ	
4.1	Վարկառուի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում կիրառվող տույժ	Վարկային պայմանագրով նախատեսված ժամկետներում վարկի մայր գումարը և/կամ տոկոսագումարները չվճարելու դեպքում Բանկն իրավունք ունի դադարեցնել վարկի ժամկետանց մասի նկատմամբ տոկոսագումաների հաշվարկը՝ պահպանելով չժամկետանցված մասի նկատմամբ տոկոսագումարների հաշվարկը, և ժամկետանց վարկի և/կամ ժամկետանց տոկոսագումարների նկատմամբ (մինչև դրանց փաստացի վճարումը) կիրառել տույժ՝ օրական 0.13% չափով, սակայն ոչ ավել, քան ՀՀ օրենսդրությամբ սահմանված տուժանքի առավելագույն չափը, իսկ Նշված առավելագույն չափին հասնելուց հետո Բանկն իրավունք ունի վերականգնել վարկի մնացորդի (ներառյալ ժամկետանց մասի) նկատմամբ տոկոսագումարների հաշվարկը: Վարկը ժամկետի վերջում, իսկ հաշվարկված տոկոսագումարները յուրաքանչյուր ամիս վճարելու կարգը ընտրելու դեպքում՝ հաշվարկված տոկոսագումարները սահմանված ժամկետներում չվճարելու դեպքում Բանկն իրավունք ունի հաշվարկված տոկոսագումարների նկատմամբ (մինչև դրանց փաստացի վճարումը) կիրառել տույժ՝ տարեկան 48% (յուրաքանչյուր ժամկետանց օրացույցային օրվա համար), սակայն ոչ ավել, քան ՀՀ օրենսդրությամբ սահմանված տուժանքի առավելագույն չափը: Իսկ Վարկը սահմանված ժամկետներում չվճարելու դեպքում վարկային պարտավորությունների ամբողջական մարման օրը ժամկետային ավանդային պայմանագիրն ավտոմատ լուծվում է առանց Վարկառուին լրացուցիչ ծանուցելու և իրականացվում է վարկի (մայր գումարի, տոկոսների, տուգանքների, տույժերի և այլ վճարների՝ առկայության դեպքում) մարում՝ Ավանդի գումարի հաշվին: Այն դեպքում, եթե Ավանդի գումարը գերազանցում է վարկի գումարը (մայր գումարը, տոկոսները, տուգանքները, տույժերը և այլ վճարները՝ առկայության դեպքում)՝ գերազանցող գումարը փոխանցվում է Վարկառուի բանկային հաշվին: Ընդ որում՝ Ավանդի դիմաց վճարվում են Ավանդի լուծման ամսաթվի դրությամբ հաշվարկված տոկոսները, բայց Ավանդի ձևակերպման պահին գործող Նախորդող ժամանակահատվածի/ժամկետի տոկոսադրույքով: Օրինակ, եթե վարկի գրավ հանդիսացող ավանդի լուծումը իրականացվել է ավանդի գործողության 95-րդ օրը, ընդ որում՝ Նշված ժամկետը, համաձայն տվյալ ավանդի ձևակերպման պահին գործող պայմանների, մտնում է 91-ից 180 օր ժամանակահատվածի մեջ, որի տոկոսադրույքը կազմում էր X%, իսկ Նախորդող 60-ից 90 օր ժամանակահատվածի համար տոկոսադրույքը ավանդի ձևակերպման պահին կազմում էր Y%, ապա տվյալ դեպքում ավանդի վաղաժամկետ մարման դեպքում տոկոսների հաշվարկը կիրականացվի Y% տոկոսադրույքով, այլ ոչ թե X%-ով: Այն դեպքում, եթե տվյալ Ավանդի պայմաններով Նախորդող ժամանակահատված/ժամկետ չկա, ապա Ավանդի տոկոսների հաշվարկն իրականացվում է Ավանդի լուծման պահին գործող ցախահանց ավանդի տոկոսադրույքով:
4.2	Վարկային հաշվի գծով քաղվածքի/տեղեկանքի տրամադրում	"ՎՏԲ-Հայաստան Բանկ" ՓԲԸ գործող "Բանկային հաշիվների բացման և սպասարկման պայմանների և սակագների" համաձայն, որոնց կարող եք ծանոթանալ Բանկի ինտերնետային կայքում՝ https://www.vtb.am/am/secondary/vypiski հասցեով:
4.3	¹ Վարկի և գրավադրվող ավանդի արժույթները պետք է համընկնեն:	
4.4	² Արտարժույթով (USD, EUR, RUR) վարկը չի տրամադրվում, եթե Բանկում չկա հաճախորդի անունով բացված քարտ: Արտարժույթով տրամադրվող վարկերի դեպքում արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ապդեցություն ունենալ վարկի մարումների վրա:	
4.5	³ Արտարժույթով տրամադրվող վարկերի տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի ժամանակ վարկի գումարը փոխարկվում է դրամի, իսկ որպես փոխարկման փոխարժեք հիմք է ընդունվում ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջում հրապարակված արտարժույթի փոխարժեքը: 11.05.2020թ. դրությամբ ՀՀ ԿԲ 1 ԱՄՆ դոլարի փոխարժեքը կազմում է 484.11 ՀՀ դրամ: Վարկային պայմանագրի կնքման պահին, ինչպես նաև վարկի փաստացի մարումների ժամանակ հիմք ընդունվող փոխարժեքը կարող է տարբերվել փաստացի տոկոսադրույքի հաշվարկման ժամանակ հիմք ընդունված փոխարժեքից:	
4.6	⁴ Բացառությամբ “ՎՏԲ-Մանկություն” ավանդատեսակի:	
Ավանդի գրավով վարկային գծի տրամադրման համար Վարկառուից պահանջվող փաստաթղթերի ցանկ		
1	Պատշաճ կերպով լրացրած դիմում	
2	Անձը հաստատող փաստաթուղթ	

Ուշադրություն՝

Հաճախորդի վարկային հայտը մերժվում է, եթե՝

- Հաճախորդի կողմից չեն ներկայացվել վարկ ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթեր,
- Հաճախորդը չի բավարարում Բանկի նվազագույն պայմաններին,

- «ԱՔՌԱ» վարկային բյուրո հարցման արդյունքում պարզվել է, որ Հաճախորդը (առկայության դեպքում նաև Համավարկառուները/Երաշխավորները) ունի բացասական վարկային պատմություն,
- Վարկունակության գնահատման արդյունքում պարզվել է, որ Հաճախորդը վարկունակ չէ,
- Վարկավորման գործընթացի արդյունքում հաճախորդի վերաբերյալ հայտնի է դարձել այնպիսի տեղեկություն, որը կասկածի տակ է դնում հաճախորդի կողմից ներկայացված տեղեկության հավաստիությունը:

Ուշադրություն՝

Ֆինանսական կազմակերպության կողմից սպառողին վարկ տրամադրելու դրական որոշման բոլոր գործոնները և վարկի մերժման բոլոր գործոնները, որոնք սահմանված են ֆինանսական կազմակերպության կողմից ընդունված ներքին իրավական ակտերով, տեղեկատվություն վարկ տրամադրելու որոշումների կայացման համար կիրառվող վարկարժանության գնահատման եղանակների վերաբերյալ (վարկային պատմություն, վարկային սքոր), այդ թվում՝

ա. Վարկային պատմության էությունը, կարևորությունը, ինչպես է այն ձևավորվում, ինչ տեսակի և ինչ վաղեմության տեղեկատվություն է պարունակում, ինչ պետք է անեն սպառողները սխալ կամ թերի վարկային պատմությունը փոփոխելու համար և այլն, ինչպես նաև հղում www.abcfinance.am և www.acra.am կայքերի համապատասխան էջերին:

բ. Վարկային սքորի (կիրառելու դեպքում) էությունը, կարևորությունը, ինչ տեսակի վարկային սքոր է կիրառվում ֆինանսական կազմակերպության կողմից (Ֆայկո, ԱՔՌԱ, սեփական սքոր գնահատական, թե այլ): Սեփական վարկային սքոր կիրառելու դեպքում տեղեկատվություն սքորի հաշվարկի վրա ապդեցություն ունեցող հիմնական գործոնների (օրինակ՝ գործող վարկերի գումար և քանակ, վարկային պատմության երկարություն, վարկային հարցումներ, ժամկետանց վարկեր և այլն) և դրանց ապդեցության ուղղության (բարձրացնում է, թե իջեցնում է սքորը) վերաբերյալ: ԱՔՌԱ կամ Ֆայկո սքոր կիրառելու դեպքում տեղադրվում են հղումներ www.abcfinance.am և www.acra.am կայքերի համապատասխան էջերին:

գ. Ինչ քայլեր կարող են ձեռնարկել սպառողները իրենց վարկային պատմությունը և սքորը բարելավելու համար (օրինակ՝ մարել գործող վարկերի մի մասը, բացառել գործող վարկերի գծով ժամկետանց պարտավորությունների առկայությունը), ինչպես նաև ինչ գործողություններ չպետք է անեն վարկային պատմության և սքորի վատթարացումից խուսափելու համար:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅԹԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅԹԸ ՅՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ԶԵՉ ՀԱՄԱՐ ՏՈԿՈՍ ԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԶԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅԹԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ ԲԱՆԿԻ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅԵՐՈՒՄ՝ <http://www.vtb.am/am/information/raschet-fakticheskoy-stavki> ՀԱՍՑԵՈՎ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԶԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՏԱՑՅՈՒՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՍ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ԶԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍԵՒ ՌԻՍԿԵՐԻՅ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆՈՒԹՅՈՒՆ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՅԱՍԱԿԱՆ ՎԱՐԱԿՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԶԵՉ ՀԱՄԱՐ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ԿԱՐՈՂ Է ԽՈՐԸՆԴՈՏ ՀԱՆԴԻՍԱՆԱԼ ԱՅԼ ՎԱՐԿԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼԻՍ ԲԱՆԿԸ ԶԵՉ ԿՏՐԱՄԱԴՐԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ, ՈՐՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ԶԵՉ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ “ԶԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ” ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ և ԶԵՉ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՅՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է՝ <http://www.fininfo.am/compare-consumer-loan>

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ Բանկը՝ “Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին” ՀՀ օրենքով սահմանված Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով, կարող է Հաճախորդից “ճանաչիր քո հաճախորդին” (“Know your customer”) սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ Հաճախորդին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում: